ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 27

20 ապրիլի 2018 թվական

ԳՆՄԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի բնակավայրերի ճանապարհների անանցանելի վիճակը, որը ստեղծում է շարժման անհարմարություններ, խաթարում է համայնքների բնականոն կյանքի ընթացքին, առաջացնում համայնքի բնակիչների դժգոհությունը՝ առաջացնելով վերանորոգման արագ կազմակերպման անհրաժեշտություն և ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի <<գ>> պարբերության դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի 2018 թվականի փետրվարի 6-ին հաստատված գնման պլանում կատարել փոփոխություն՝ ավելացնելով ճանապարհների վերանորոգման աշխատանքներ և փողոցների փոսային նորոգում տողերը:
2. Սույն որոշման 1-ին կետի գնումները իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի <<գ>> պարբերության դրույթները՝

չկանխատեսված հանգամանքների հետևանքով առաջացած և հրատապ համարվող գնումների դեպքում;

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -1

Նաիրի Ալավերդյան

Գևորգ Շաբոյան

Արսեն Արսենյան

Սուրեն Գևորգյան

Կամսար Հովսեփյան

Արմենակ Նաջարյան

Արթուր Ուռումյան

Վահրամ Սահակյան

Ագուն Սաղաթելյան

Զավեն Սարգսյան

Արսեն Վարոսյան

Գևորգ Ղզրոյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան

ք. Մարալիկ
20 ապրիլի 2018 թվական